Արձանագրություն N 2

<<ՔՆՔԾԻԳ-ՊԸԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի <<Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայության>> ձեռքբերման բացման նիստի

ք. Երևան 28.09.2016թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Եղիազարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մնացականյան /գնահատող/, Ռ. Խոջայան /գնահատող/, Գ. Գևորգյան/բացող/, Կ. Բայբուրտյան /բացող/,

1. Տեղեկություններ <<ՔՆՔԾԻԳ-ՊԸԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2016 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ՊԸԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ռ. Եղիազարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	<<էմ Ջի Դիզայն>> ՍՊԸ
2	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
3	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Բանակցային ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

h/h	**<<Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն**					Գնման առարկայի նախահաշվային արժեքը
	Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր	
1	<<էմ Ջի Դիզայն>> ՍՊԸ	850 000	70 000		920 000	1 520 000
2	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ	909 091	90 909	200 000	1 200 000	

3	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	1 136 364	113 636	250 000	1 500 000	

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

4.2 <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին.

4.3 <<ԷՄ ՋԻ Դիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

-ներկայացված տուժանքի մասին համաձայնությունը ըստ օրինակելի ձևի ենթակա է ստորագրման գնման գործընթացի մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից: <<ԷՄ ՋԻ Դիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, ինչպես նաև գլխավոր հաշվապահ չունենալու մասին համապատասխան գրությունը, որը ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման՝ ենթակա է մերժման.

- վճարման պահանջագրում առկա չէ <<Արժույթը (բառերով և կոդով)>> տողի արժույթի կոդը, որը համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի ենթակա չէ շտկման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Պարզեցված ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ռ. Եղիազարյան)

5.1 Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<<ԷՄ ՋԻ Դիզայն>> ՍՊԸ	Անբավարար
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	Բավարար
<<Երևաննախագիծ>> ՓԲԸ	Բավարար

5.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ՔՆՔԾԻԳ-ՊԸԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցնող <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Եղիազարյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 29.09.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 29.09.2016թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

7. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստիանցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ժամը 11:30-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Ռ. Եղիազարյան

Անդամներ՝ ..... Գ. Մնացականյան

..... Ռ. Խոջայան

..... Գ. Գևորգյան

..... Կ. Բայբուրտյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան